

**ՄԱՍՑԽԵ-ՋԱՎԱԽՔԻ ՈՒ ԾԱԼԿԱՅԻ ՊԱՏՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ**

ՊԵՏՐՈՍՅԱՆ Դ. Տ.

Մամցիւե-Ջավախք նահանգն ու Քվեմո Քարթլի նահանգի Ծալկայի շրջանը Վրաստանի հարավում ընկած երկրամասեր են, որոնք խիտ բնակեցված են հայերով: Հայ-վրացական հարաբերություններում այս երկրամասերի դերը մեծ է: Մակայն ներկայումս կան բազմաթիվ սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական խընդիրներ, որոնց շուրջ կողմերը համաձայնության գալ չեն կարողանում և նախընտրում են խնդիրների վերհանումը հետաձգել: Նման լճացած իրավիճակում, երբ լուծում չստացած խնդիրներով հագեցած իրավիճակը ծնում է նորերը, ավելի առաջնահերթ է դառնում ժողովրդագրական խնդիրը: Անդրադառնանք պատմաքաղաքական և ժողովրդագրական որոշ հիմնախնդիրների, որոնք կարևորվում են ջավախքյան հիմնախնդրի ենթատեքստում:

Ջավախք գավառը գտնվել է Մեծ Հայքի թագավորության Գուգարք նահանգում: Գուգարքը եղել է Հայաստանի սահմանային բղէշխություններից մեկը՝ սահմանակից լինելով արևմուտքում՝ Տայքին, արևելքում՝ Ուտիքին, հարավում՝ Այրարատին, հյուսիսում՝ Վիրքին կամ Իբերիային¹: Պատմական Ջավախքը Գուգարքի կենտրոնական գավառներից է: Այսօր Գուգարքի տարածքը գտնվում է երեք պետությունների՝ Հայաստանի, Վրաստանի, Թուրքիայի կազմում:

Ջավախք գավառի սահմաններն են՝ հյուսիսում այն եզերվում է Թրիալեթի (Թռեղքի) լեռնաշղթայով, արևելքում՝ Ջավախքի լեռներով, հարավ-արևելքում հասնում է մինչև Աշոցքի սարահարթ, հարավում՝ Եղնախաղի (Չըլդըրի) լեռներով, հյուսիս-արևմուտքում՝ Մեսխեթի լեռնաշղթայի արևելյան հատվածով:

Ջավախքի միջին բարձրությունը ծովի մակարդակից մոտ 1800 մ է: Ամենաբարձր գագաթը Մեծ Աբուլ լեռն է՝ 3301 մետր: Տարեկան միջին ջերմաստիճանը 4-4.5 աստիճան է (ըստ Ցելսիուսի): Ջավախքին բնորոշ են խիստ ու երկարատև ձմեռը և կարճ ամառը: Ջավախքը հարուստ է լճերով՝ Փարվանա, Տաբաձորի, Մադամո, Խոզափին, Խանչալի, Մադաթափա: Անտառածածկ են միայն հյուսիսային և արևմտյան շրջանները: Կենտրոնական մասում՝ պատմական Ջավախք գավառի կենտրոնում, տարածվում են ընդարձակ սևահողային դաշտեր: Դեպի արևմուտք Մամցիւեն է, որը ներառում է Ախալցխայի, Ադիգենի ու Ասպինձայի շրջանները: Այն համեմատաբար ցածր դիրք է զբաղեցնում Ջավախք գավառից և մասամբ անտառածածկ է, զարգացած է այգեգործությունը: Իսկ դեպի հյուսիս-արևելք՝ Թրիալեթի լեռնաշղթայի արևելյան հատվածի վրա, տարածվում է Ծալկայի շրջանը՝ իր խիստ կլիմայով:

¹ Մեքրոնյան Ա., Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Ե., 2003, էջ 32:

Վրաստանի նախագահի հրամանագրով 1990-ական թվականների կեսերին ստեղծվեցին նոր վարչական միավոր և վեց շրջաններ՝ Ախալքալաքի (1.2 հազ ք/կմ), Նինոծմինդայի (1.4 հազ ք/կմ), Ախալցխայի (1 հազ ք/կմ), Ասպինձայի (0.8 հազ ք/կմ), Ադիգենի (0.8 հազ ք/կմ) և Բորժումի (1.2 հազ ք/կմ²): Միավորվելով այդ վարչական միավորի մեջ՝ կազմեցին Սամցխե-Ջավախքի նահանգը²: Մյուս կողմից, Ծալկայի հայաբնակ շրջանը՝ պատմական Թոեղք գավառը, ներառվեց վրացիներով ու ադրբեջանցիներով բնակեցված Քվեմո Քարթլի նահանգի կազմի մեջ:

«Ջավախք» անվանման մասին խոսելիս կարելի է նշել, որ պատմագրության մեջ տարաբնույթ տեսակետներ են հնչել: Ըստ Քարթլիս Յխուրեբայի (Քարթլիի տարեգրությունը)՝ Ջավախքը և նրան հարակից այլ երկրամասեր ժառանգություն են հասել Քարթլուսի թոռանը՝ Ջավախտսին, և վերջինիս անունից էլ երկրամասը կոչվել է Ջավախք³: Մեկ այլ ավանդապատումի համաձայն՝ երկրամասը Ջավախք է կոչվել Ջավախք իշխանի պատվին: Սակայն այս առասպելական բացատրությունները բնականաբար չի կարելի հիմք համարել: Վ. Սարգսյանը Ջավախք բառը կապում է հայերեն «ճապաղ» (փոխած, ծավալված, տարածված) բառի հետ, որը համապատասխանում է Ջավախք գավառի ռելիեֆին⁴: Տ. Դալայանը Ջավախք անվանման ծագումը կապում է օսերեն «ձաբախ»՝ լավ, բարեբեր բառի հետ⁵:

Ջավախք տեղանունը Չաբախսա ձևով առաջին անգամ հանդիպում է ուրարտական արձանագրություններում մ.թ.ա. IX դարի վերջերին և ըստ բազմաթիվ ուսումնասիրողների՝ Ջավախքը Չաբախսա բառի տառադարձված տարբերակն է՝ Չաբախսա-Չաբախսա-Չավախսա-Չավախք⁶:

Ըստ գրող, հրապարակախոս Մերուժան Տեր-Գուլանյանի՝ Ջավախք բառի նշանակությունը կապված է Չաբախսա կամ Չավախսա բառի ստուգաբանության հետ. «Արգիշտին գրում է, որ ինքը Հյուսիսոս ծովակ արշավանքի ժամանակ, որը կարելի է Խոզափին լիճը կամ որ ավելի հավանական է, Փարվանան համարել, գրավեց նաև Չաբախսա երկիրը: Դիակոնովը, ուրարտական այդ արձանագրության մեջ, «Բ»-ն «Վ» է կարդում՝ «Չավախսա»: Հարցականով է կարդում ինքը: Ասում է, որ հավանական է «Չավախսա» ձևը: ... Եվ ահա, «Չավ»-ը գավակն է, ի

² Շրջանների մակերեսը վերցված է՝ Սարգսյան Վ., Սամցխե-Ջավախք-Թոեղքը հայ-վրացական հարաբերությունների հոլովություն, Ե., 2006, էջ 25:

³ Մինասյան Ա., Վրաստանի էթնիկական փոքրամասնություններ, Ե., 2006, էջ 123:

⁴ Մելքոնյան Ա., նշվ. աշխ., էջ 33:

⁵ Սարգսյան Վ., Ջավախք տեղանվան ծագումը, Ե., 1999, էջ 5-41:

⁶ Դալայան Տ., Սկյութական ցեղերը Շիրակում և հարևան գավառներում, Շիրակի պատմամշակութային ժառանգությունը, հանր. 4-րդ նստաշրջանի գեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 2000, էջ 11-12:

⁷ Մելքոնյան Ա., նշվ. աշխ., էջ 34, Հայ ժողովրդի պատմություն, Ե., 1971, հ. 1, էջ 420, Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմության նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 431:

սկզբանե՝ գավ, գարմ և այլն, «ախ»-ը՝ ջուրը՝ աղբյուր: Գյուղում ասում են՝ «գնա ախը կապի», այսինքն՝ առուն, որ գալիս է: Ջավախք՝ «Ջրի գավակներ» է նշանակում: Ես այդպես եմ կարծում: Եվ բնությանը համապատասխանում է՝ ամբողջ երկիրը աղբյուր է, լիճ է ու ջուր է»⁸:

Պատմական Ջավախքը մինչուրարտական շրջանում եղել է հայ էթնոսով բնակեցված տարածք, որը մերթ եղել է ինքնիշխան, առանձին ցեղապետություն, մերթ էլ մաս է կազմել հայկական հնագույն պետական կազմավորումների՝ Դայա-Դիաուխի (Տայք), Էթիունիի և Հայասայի⁹:

Ուշ բրոնզեդարյան շրջանում Ջավախքով են անցել Ճորոխի հովիտը, մերձսևծովյան շրջանները, Շիրակը, Արարատյան դաշտը և Վանանդը իրար կապող առևտրային մայրուղիները¹⁰: Այն կարևոր դիրք ունեցող տարածաշրջան է եղել հյուսիսային Հայաստանի, հարավային Վրաստանի ու Սև ծովի արևելյան ափի բնակավայրերի հարաբերություններում:

Ջավախքը միասնական հայկական պետության կազմի մեջ է մտել մ.թ.ա. 785-784 թթ., երբ Արգիշտին Տայքի, Բասենի և մի շարք այլ երկրամասերի հետ նվաճել է նաև Ջավախքը¹¹:

Պատմության ընթացքում Ջավախքը բազմիցս ձեռքից ձեռք է անցել՝ մեկ լինելով Հայաստանի կազմում, մեկ՝ Վրաստանի, մեկ՝ կիսանկախ: Մինչև 387 թ. հիմնականում այն Հայաստանի կազմում էր: Դրանից հետո ավելի հաճախակի է հայտնվում այլ պետությունների կազմում: Թմկաբերդի տեր Սարգիս Ջաղեցին 1266 թվականին հիմնադրեց Սամցիեի ընդարձակ իշխանությունը, որը Տաշիրից ձգվում էր մինչև Էրզրում: Այն, պայքար մղելով միջինասիական ցեղերի, տարբեր իշխանապետությունների, Վրաստանի և հարևան այլ պետական կազմավորումների դեմ, իր գոյությունը կարողացավ պահպանել մինչև 1535 թ.: Այս շրջանում ծաղկում է ապրել և հայ մշակույթի խոշոր կենտրոն դարձել Ախալցխա քաղաքը: Քասրե-Շիրինի հաշտության պայմանագրով (1639 թ.) պատմական Ջավախք գավառը անցավ Օսմանյան Թուրքիային: Ջավախքը մտնում էր Ախալցխայի էյալեթի (վիլայեթ, նահանգ) մեջ: Իսկ Օսկան Պարսկաստանի կազմում էր:

Օսկան ու Սամցիե-Ջավախքն ամբողջությամբ Ռուսաստանի տիրապետության տակ են անցնում 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո¹²: Ջավախքի շուրջ վեճը սաստկանում է XX դ. սկզբներին՝ հատկապես Հարավային Կովկասում Ռուսաստանի ազդեցության թուլանալուց հետո: 1918 թվականի հայ-վրացական ընդհարումները, թուրքական զորքերի ներխուժումը Անդրկովկաս, կոտորածները Ջավախքում, Վրաստանի հարուցած խոչընդոտները տնտեսական կյանքը կազմակերպելու հարցում,

⁸ Փորձագիտական հարցում Մ. Տեր-Գուլանյանի հետ, 23.XII.2010, հեղինակի անձնական արխիվ:

⁹ Մելքոնյան Ա., նշվ. աշխ., էջ 35-36:

¹⁰ Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Ե., 1971, էջ 220:

¹¹ Մելքոնյան Ա., նշվ. աշխ., էջ 35:

¹² Նույն տեղում, էջ 155-180:

արևմտյան տերությունների կովկասյան հակահայ քաղաքականությունը, հայկական կողմի մի շարք դիվանագիտական ու քաղաքական սխալները Ջավախքը հասցրին ծանրագույն վիճակի:

Ուշագրավ է անգլիացի դիվանագետ Լուի Մալլետի՝ 1919 թ. մայիսի 16-ին Փարիզում ներկայացրած մոտեցումը՝ Անդրկովկասի տարածքների վեճերի հետ կապված: Ավ. Ահարոնյանի այն հարցին, թե ինչու են անգլիացիները պաշտպանում Վրաստանին՝ Ջավախքի, Լոռիի և Ադրբեջանին՝ Ղարաբաղի հարցերում, երբ այդ գավառները Հայաստանի համար կենսական նշանակություն ունեն, Մալլետը պատասխանեց, որ դրա փոխարեն հայերը կստանան Արևմտյան Հայաստանը¹³:

Թուրքական ասպատակություններից փրկվելու նպատակով Ծալկայի ու Բակուրիանի անտառներում պատսպարված 80 հազար հայերից մոտ 35-40 հազարը մահանում է սովից, ցրտից ու զանազան հիվանդություններից: Ողջ մնացածները հայրենի բնակավայրերը վերադարձան մինչև 1919 թ. մարտը: Թուրքերը թալանի ու ավերի էին մատնել ամբողջ գավառը: Համեմատաբար լավ վիճակում գտնվող թրքախոս հայ կաթոլիկները և ռուս դուխոբուրները զգալի օգնություն ցույց տվեցին հայ գաղթականությանը բնակավայրերը վերականգնելու և ցանքսը կազմակերպելու գործում:

Հայաստանի կառավարությունը որոշում ընդունեց արտասահմանից ստացվող հացահատիկից բաժին հանել նաև Ախալքալաքի բնակչությանը: Վրաստանը անընդհատ խոչընդոտներ էր հարուցում հացահատիկը կամ այլ մթերքը Հայաստան ներկրելու կամ Ջավախք փոխադրելու հարցում՝ սահմանելով բարձր մաքսեր: 1919 թ. մարտի վերջին Ախալքալաքի «Ջանգալ» թերթը գրում է. «Եթե ուշանա օգնության գործը, Ախալքալաքի հայ գյուղերի տեղ մենք կգտնենք սովամահների գերեզմանոցներ»¹⁴:

Ի վերջո, 1921 թ. նոյեմբերի 6-ին Խորհրդային Հայաստանի ու Խորհրդային Վրաստանի միջև կնքվում է պայմանագիր սահմանագծի վերաբերյալ: Վերջնականապես ամրագրվեց Լոռու միացումը Հայաստանին և Ջավախքի միացումը՝ Վրաստանին: Այն մասնակի փոփոխություններով պահպանվում է մինչև այսօր: Ջավախքը խորհրդային շրջանում ունեցել է որոշակի նվաճումներ: Վերականգնվել է ժողովրդագրական պատկերը, զգալիորեն բարելավվել է ժողովրդի սոցիալ-տնտեսական վիճակը, կարգավորվել է հասարակական կյանքը: Որպես այս շրջանի ուշագրավ իրադարձություն, մեր կարծիքով, պետք է համարել թուրք-մեսխեթցիների փտարումը տարածաշրջանից և դրանով Ջավախքի նախկին ժողովրդագրական դիրքերի ամրապնդումը:

Մամցխե-Ջավախքում ժողովրդագրական ամենաշոշափելի տեղաշարժը, որը նաև գործնական նշանակություն ունի, տեղի է ունեցել 1830-ականներին, երբ ռուս-թուրքական պատերազմից հետո հայերի մի ստվար զանգված

¹³ Ահարոնյան Ա., Մարդարապատից մինչև Սևր և Լոզան, Ե., 2001, էջ 26-27:

¹⁴ Ջանգալ, 30.III.1919, N 36:

Մամցիւե-Չավախքի ու Ծալկայի պատմաքաղաքական և ժողովրդագրական իրավիճակ 149

Արևմտյան Հայաստանից գաղթեց ռուսական տիրապետության սահմաններ: Գաղթականների ընդհանուր թիվը կազմել է 12 300 ընտանիք կամ 74 000 մարդ, որից 9 682 ընտանիքը կամ 58 000 մարդը՝ Էրզրումի նահանգից: Այս քանակի մեջ ներառված չեն եզդի և հույն գաղթականները¹⁵: Ախալցխայ- ում և Ախալքալաքում շեշտակի աճեց հայկական տարրի տեսակարար կշիռը: Վերականգնվեց երկրամասի նախկին ժամանակների էթնիկ վիճակը: Ախալցխայում Էրզրում քաղաքից եկած գաղթականները Փոցխով գետի աջ ափին հիմնադրեցին նոր ու ընդարձակ թաղամաս: Ախալցխայի նախկին բնակչությունը մնաց հին թաղամասում՝ Բերդի թաղում, գետի ձախ ափին: Ախալքալաքի գավառում հիմ-նադրվեց և վերակառուցվեց շուրջ հիսուն գյուղ: Վերաբնակիչներին տեղաբնիկները զգալի նյութական օգնություն ցույց տվեցին: Արևմտահայերի գաղթը մեծ նշանակություն ունեցավ Մամցիւե-Չավախքի վերակենդանացման համար: Արևմտահայերը տեղի բնակչությանը պարտադրեցին արևմտահայերենը և ներմուծեցին իրենց սովորույթները: Այսուհանդերձ, ինչպես նշում է Ռուբեն Տեր-Մինասյանն իր «Ախալքալակի պայքարը» հոդվածում, մինչև արևմտահայերի գաղթը տեղում ևս եղել է հայկական բնակչություն, ու գավառը եղել է հայկական¹⁶:

1838-1878 թթ. Ախալքալաքի գավառի առաքելական բնակավայրերի մեծ մասի բնակչության դինամիկան հետևյալն է.

Աղյուսակ 1

Թվական	Բնակիչ ընդամենը
1838 թ.	11953
1840 թ.	12233
1842 թ.	13004
1844 թ.	14462
1847 թ.	14670
1850 թ.	16008
1856 թ.	19818
1858 թ.	20112
1860 թ.	20155
1865 թ.	24404
1869 թ.	28014
1878 թ.	33626

XX դ. սկզբին Ախալքալաքի ընդարձակվելիք գավառում, ներառյալ Ծալկան և Տաբաձորիի հայկական գյուղերը, բնակվում էր 120 000 մարդ, որոնցից 94 000-ը հայեր էին (բնակչության 77 %-ը):

Պողոս Աբելյանի ներկայացրած զեկուցագրում 1916 թ. Ախալքալաքի գավառի բնակչության ժողովրդագրական պատկերը հետևյալն էր.

1. հայեր – 83 000 մարդ
2. վրացիներ (քրիստոնյա և մահմեդական) – 10 000 մարդ

¹⁵ Մելքոնյան Ա., նշվ. աշխ., էջ 186-189:

¹⁶ Տեր-Մինասյան Ռ., Ախալքալակի պայքարը, Դրօշակ, N 1, 1926:

3. դուխոբուրներ – 8 000 մարդ

4. թուրքեր – 8 000 մարդ

5. քրդեր և այլ ազգեր – 1 000 մարդ

Ընդամենը – 110 000 մարդ:

1939 թ. Սամցխե-Ջավախքի բնակչությունը և էթնիկ կազմը հետևյալն էր¹⁷.

Աղյուսակ 2

Սամցխե-Ջավախքի բնակչության թիվը և էթնիկական կազմը 1939 թ. տվյալներով (մարդ, %). ներառված չէ Բորժոմի շրջանը

Շրջան	Վրացիներ	Հայեր	Թուրքեր	Ռուսներ	Քրդեր	Ընդամենը
Ախալցխա	5.836 (10.5%)	16.454 (29.7%)	28.428 (51.2%)	1.538 (2.8%)	1.423 (2.6%)	55.490
Ադիգեն	5.466 (13.2%)	942 (2.3%)	32.928 (79.7%)	1.281 (3.1%)	69 (0.9%)	41.314
Ասպինձա	6.500 (19.9%)	1.741 (5.3%)	21.612 (66.2%)	293 (0.9%)	1.980 (6.1%)	32.644
Ախալքալաք	4.857 (7.5%)	54.081 (83.6%)	4.015 (6.2%)	1.102 (1.7%)	309 (0.5%)	64.655
Նինոծմինդա	93 (0.3%)	27.376 (79.2%)	1.009 (2.9%)	5.862 (17.0%)	77 (0.2%)	34.575
Ընդամենը	22.752 (9.9%)	100.594 (44.0%)	87.992 (38.5%)	10.076 (4.4%)	3.858 (1.7%)	228.678

Հետպատերազմյան առաջին տարիներին Վրաստանի կառավարությունը ձեռնամուխ է լինում բնակչության կազմի ակտիվ վերափոխումների: 1944 թ. հիմնականում Ախալցխայի, Ասպինձայի ու Ադիգենի շրջաններից տեղահանվում են թուրք-մեսիսեթցիները: Նրանց տեղահանությունից հետո հայերի տեսակարար կշիռը տարածաշրջանում կտրուկ ավելացավ: Բնականաբար, Վրաստանը պետք է քայլեր ձեռնարկեր այդ իրավիճակը փոխելու համար: Ծրագրված կերպով Վրաստանի խորքերից հայկական շրջաններ են տեղափոխվում բազմաթիվ վրացի ընտանիքներ: Ամենամեղմ հաշվարկների համաձայն՝ 1950-ական թթ. վրացի վերաբնակիչների թիվը հասավ 32 հազարի, այն է՝ տարածաշրջանի բնակչության մեկ երրորդը: Որոշ շրջաններում վրացի բնակչության թիվն աճեց մի քանի անգամ¹⁸:

¹⁷ Մինասյան Ս., նշվ. աշխ., էջ 121:

¹⁸ Նույն տեղում, էջ 121-122:

Մամցիւե-Ջավախքի մի քանի շրջանների վրացի բնակչության տեսակարար կշռի դինամիկան 1939 և 1959 թթ.

Շրջաններ	1939 թվական	1959 թվական
Ադիգեն	5.466 մարդ (13.2 %)	16.187 մարդ (82.6 %)
Ախալցխա	5.836 մարդ (10.5 %)	18.878 մարդ (37.4 %)
Ասպինձա	6.500 մարդ (19.9 %)	9.081 մարդ (80.6%)

Մրանք այն շրջաններն են, որտեղ կար մեծաքանակ թուրք բնակչություն, իսկ նրանց արտաքսումից հետո լցվեցին վրացիներով: Մամցիւե-Ջավախքում վրացի բնակչության արհեստական աճին հակառակ՝ հայ բնակչությունը շատ չնչին տոկոսով էր ավելանում: Այսպես, Ախալքալաքի շրջանում 1939 թվականին հայ բնակչության թիվը 54 081 մարդ էր (83.6%), իսկ 1959 թ.՝ 57 209 (90.8%): Հայ բնակչության շրջանում տարածված արտագաղթը մեծ չափերի հասավ 1960-1970-ական թթ.: Դրա պատճառը տեղում աշխատանք ճարելու և կրթություն ստանալու հետ կապված դժվարություններն էին: Եվ չնայած Ջավախքի հայ բնակչության ժողովրդագրական դրական բարձր ցուցանիշներին, նրա թիվը այդ տարիներին երկրամասում զգալիորեն չի աճել:

Վրացիների չափաբաժնի առավել նկատելի աճ գրանցվեց Ադիգենի ու Ախալցխայի շրջաններում:

Արդեն 1989 թ. Մամցիւե-Ջավախքում բնակչության կազմը հետևյալն էր¹⁹.

1989 թվականի դրությամբ Մամցիւե-Ջավախքի բնակչության թիվը և էթնիկական կազմը. ներառված չէ Բորժոմի շրջանը

Շրջան	Վրացիներ	Հայեր	Ռուսներ	Այլ ազգեր	ընդամենը
Ախալցխա	18.878 (37.4%)	25.753 (51.1%)	3.684 (7.3%)	2.115 (4.2%)	50.430
Ադիգեն	16.187 (82.6%)	1.627 (8.3%)	1.276 (6.5%)	508 (2.6%)	19.598
Ասպինձա	9.081 (80.6%)	2.068 (18.4%)	60 (0.5%)	56 (0.5%)	11.265
Ախալքալաք	3.566 (5.7%)	57.209 (90.8%)	1.643 (2.6%)	555 (0.9%)	62.977
Նինոծմինդա	50 (0.2%)	27.090 (84.5%)	4.616 (14.4%)	308 (1.0%)	32.064
Ընդամենը	47.762 (27.1%)	113.747 (64.5%)	11.283 (6.4%)	3.542 (2.0%)	176.334

Հայերի տեսակարար կշիռը նվազեցնելու քաղաքականությունը շարունակվեց ԽՍՀՄ փլուզումից հետո: Ինչպես արդեն ասվեց, 1990-ականների կեսերին ընդունվեց հրամանագիր: Ըստ այդմ՝ ստեղծվել

¹⁹ Սարգսյան Վ., Ջավախքը 1988-2008 թվականներին, Ե., 2009, էջ 289:

էր նոր վարչատարածքային միավոր՝ Սամցխե-Ջավախքի նահանգը: Դրա կազմում ընդգրկվել էր Բորժումի շրջանը, որի 33 300 բնակիչների միայն 10 %-ն էր հայ (1990 թ. տվյալներով): Վրաստանի սահմանադրության համաձայն՝ երկրի վարչատարածքային բաժանումը որոշվելու էր երկրի ամբողջ տարածքի նկատմամբ իշխանությունների վերահսկողությունը վերականգնելուց հետո (հոդ. 2.3): Մինչ այդ սահմանվել է երկրամասում նախագահի լիազոր ներկայացուցչի (ռեզուներելիների) ինստիտուտը: Սակայն այս համակարգը սահմանադրական չէր և չունեի համապատասխան իրավաբանական հիմք: Բացի այդ, քանի որ Վրաստանի սահմանադրության մեջ ոչինչ չի ասվում երկրի վարչատարածքային կառուցվածքի մասին, նահանգապետի և շրջանների իշխանությունների միջև գործառնությունների հստակ բաշխում գոյություն չունի²⁰:

1994 թ. հուլիսի 31-ի թիվ 237 հրամանագրում, որով ստեղծվում է Սամցխե-Ջավախք նահանգը, այն բնութագրվում էր հետևյալ անհրաժեշտությամբ. «հաշվի առնելով, որ երկրում վերջին ժամանակներում ստեղծված քաղաքական, տնտեսական, քրեաձին իրադրության պատճառով Սամցխե-Ջավախեթում՝ Ադիգենի, Ասպինձայի, Ախալքալաքի, Ախալցխեի, Բորժումի և Նինոծմինդայի շրջաններում տեղ են գտել լուրջ դժվարություններ տնտեսության ոլորտում, ձգձգվում են նոր տնտեսավարման, սեփականաշնորհման անցնելու գործընթացները, չեն գնվում և իրացվում բնակչության արտադրած մթերքները, առկա են դժվարություններ էներգակիրների բաշխման գործում, չեն կատարում սոցիալ-տնտեսական և այլ հարցերի վերաբերյալ իշխանության և կառավարման բարձրագույն մարմինների որոշումները, թուլացել է դրանց կատարման վերահսկողությունը, ինչը բացասաբար է անդրադառնում բնակչության վիճակի, քաղաքացիների իրավունքների և ազատությունների իրական երաշխիքների վրա»²¹:

Չնայած այս պատճառաբանությանը՝ 1994 թ. հուլիսի 31-ի հրամանագիրը չունեի ոչ պատմական, ոչ տնտեսական հիմք: Այն նպատակ ուներ տվյալ վարչական տարածքում մեծացնել վրացական էթնիկ տարրի տեսակարար կշիռը: Նույն մոտեցումն էր կիրառվել նաև այն ժամանակ, երբ Բորժումի շրջանի մեջ մտցվեցին Ախալքալաքին տնտեսապես, էթնիկ, պատմականորեն ու մշակութապես կապված Տաբաձորի, Մոլիթ, Չխարոլա հայկական գյուղերը²²:

Վրաստանը անընդհատ փորձեր է անում փոխելու երկրամասի ժողովրդագրական պատկերը: Օրինակ՝ Աջարիայի լեռնային շրջաններում բնական աղետներից տուժած վրացիները բնակեցվել են Սամցխե-Ջավախքում: Իհարկե, նրանց մեծ մասը, հետագայում չհարմարվելով Ջավախքի խիստ կլիմայական պայմաններին, վերադարձել է Աջարիա: Բազմաթիվ վրացի փախստականներ են վերաբնակեցվել Ջավախքում,

²⁰ Մինասյան Ս., նշվ. աշխ., էջ 123:

²¹ Մարգարյան Վ., Ջավախքը 1988-2008 թվականներին, էջ 154:

²² Մինասյան Ս., նշվ. աշխ., էջ 124:

Մամցիւե-Չավախքի ու Ծալկայի պատմաքաղաքական և ժողովրդագրական իրավիճակ 153
ուվքեր եկել են Աբխազիայից ու Հարավային Օսիայից: 2001 թ. հունվարի
դրությամբ նրանց թիվը մոտ 3 000 մարդ էր:

Մամցիւե-Չավախքից իրենց հերթին գաղթեցին դուխորուներն ու
մալականները: Նրանց 3 000-անոց համայնքից մնացել է մեկ երրորդից էլ
պակաս: Նինոծմինդայի շրջանում դուխորուների լքած տները գնելու և
վրացիներին հատկացնելու համար ստեղծվել են «Մերաբ Կոստավայի
հիմնադրամը» և «Չավախքի վերածնունդ» ընկերությունը: Նպատակը
դուխորուների դուրս գալուց հետո նրանց լքած տները վրացիներով
բնակեցնելու պետության ծրագիրը վերահսկողության տակ պահելն էր: Հայտնի
է դեպք, երբ Կալինինո գյուղում դուխորուները 45 րոպեի ընթացքում վաճառել
են շուրջ 60 տուն: Մակայն վրացական այս քաղաքականությանը զուգընթաց՝
ակտիվանում է նաև տեղի հայության հակազդեցությունը: Նինոծմինդայի
շրջանի դուխորուների լքած տներն են տեղափոխվում հարևան գյուղերից հայ
ընտանիքներ: Ստեղծված իրավիճակում, երբ վերահսկողությունը թուլացել էր
վրացի բնակչության բնակեցման ու դուխորուների տների առանց
խոչընդոտների ձեռքբերման հարցերում, դժգոհություն էր առաջացել
Վրաստանի բարձր իշխանական շրջանակներում: «...Վրաստանի
հանրապետության մարդու իրավունքների և ազգամիջյան
հարաբերությունների հանձնաժողովի 1995 թ. օգոստոսին ընդունված
որոշումներից մեկում նշվում էր, որ դուխորուների, հայ ու վրացի
վերաբնակիչների, ինչպես նաև Նինոծմինդայի շրջանի ղեկավարության միջև
ստեղծվել են «անառողջ հարաբերություններ», և «առանց որևէ հաշվառման
տեղի է ունենում բնակարանների առք ու վաճառք»-գրում է Ս. Մինասյանը²³:

Նոր տներ գնելու համար տրամադրվել էր 700 000 դոլար: Ծալկայում իրենց
բնակարաններն են լքում հույները, վերաբնակեցվում են սլավոններ, աջարներ ու
վրացիներ: Նախատեսվում է Աջարիայում ու Արևմտյան Վրաստանում
բնական աղետներից տուժածներին վերաբնակեցնել Ծալկայում: Վրաստանի
պաշտոնական աղբյուրները հայտարարում են, որ Մամցիւե-Չավախքում
փախստականներին վերաբնակեցնելու հիմնական պատճառը տների ավելի
ցածր գինն է: Ի պատասխան այդ հայտարարության՝ 2006 թ. մայիսի 27-ին
Ախալքալաքում Չավախքի հասարակական կազմակերպությունների
մասնակցությամբ տեղի ունեցավ կլոր սեղան: Մասնակիցները կոչ արեցին ոչ
կառավարական տարբեր կազմակերպություններին, ինչպես նաև ջավախա-
հայությանը, ձեռնարկել համարժեք քայլեր:

Այսպիսով, Վրաստանի վարած քաղաքականության հետևանքով Մամցիւե-
Չավախքում և Ծալկայում ազգային կազմն անընդհատ փոխվում է՝ ոչ հօգուտ
հայերի:

1997 թ. Մամցիւե-Չավախքում տեսնում ենք հետևյալ պատկերը.

²³ Նույն տեղում, էջ 126:

Սամցխե-Ջավախքի բնակչության
թվաքանակը և ազգային կազմը 1997 թ. դրությամբ²⁴

Շրջան	Հայեր	Վրացիներ	Ընդամենը
Ադիգենի	1.407 (5.8%)	22.222 (91.6%)	23.629
Ասպինձայի	2.780 (19.1%)	11.660 (80.1%)	14.440
Բորժումի	3.816 (10.0%)	29.518 (77.6%)	33.334
Ախալցխայի	23.644 (42.8%)	25.688 (46.8%)	49.332
Ախալքալաքի	62.814 (91.3%)	3.027 (4.4%)	65.841
Նինոծմինդայի	34.697 (89.6%)	451 (1.2%)	35.148
Ընդամենը	129.158 (58.25%)	92.566 (41.75%)	221.724

Հայերը նահանգի բնակչության 58 %-ն են (129 158 մարդ), իսկ վրացիները՝ 41.75%-ը (92 566 մարդ): Ի դեպ, մինչև Բորժումի շրջանի միացումը մյուս շրջաններին երկրամասում վրացիները կազմում էին ընդամենը 30.2 % (59 351 մարդ):

2002 թվականին պատկերն է՝ չավելի է վատթարանում²⁵:

Սամցխե-Ջավախքի բնակչության
թվաքանակը և ազգային կազմը 2002 թ. դրությամբ

Շրջան	Ընդ. բնակչ.	Վրացիներ	Հայեր	Ռուսներ	Ադրբեջանցիներ	Ուկրաինացիներ	Հույներ	Եզդիներ
Ադիգեն	20.752	19.860	698	101	17	20	7	-
Ասպինձա	13.010	10.671	2.273	34	-	5	8	-
Ախալքալաք	60.975	3.214	57.516	157	3	14	51	-
Ախալցխա	46.134	28.473	16.879	410	13	42	129	-
Բորժում	32.422	27.301	3.124	585	24	75	540	1
Նինոծմինդա	34.305	476	32.857	943	2	6	5	-
Ընդամենը	207.598	89.995	113.347	2.230	59	162	740	1

Սամցխե-Ջավախքում, 1997 թ. հետ համեմատած, եթե 2002 թվականին վրացիները կրճատվել են 2 571 մարդով, ապա հայերի

²⁴ Մարգարյան Վ., Ջավախքը 1988-2008 թվականներին, էջ 290:

²⁵ Նույն տեղում, էջ 290:

Սամցխե-Ջավախքի ու Օսլյայի պատմաքաղաքական և ժողովրդագրական իրավիճակ 155
 շրջանում այդ թիվը կազմում է 15 811 մարդ: Իսկ արտագաղթի ծավալները հայերի շրջանում միտում ունեն ավելի աճելու:

Այժմ Սամցխե-Ջավախքի ժողովրդագրական վիճակը այսպիսին է.

1. Ախալքալաքի շրջանն ունի 64 գյուղ, որոնցից ամբողջովին հայաբնակ են 57-ը, ամբողջովին վրացաբնակ՝ 5-ը: Կան նաև մի քանի գյուղեր, որոնք ունեն հայ-վրացական խառը բնակչություն: Ախալքալաք քաղաքը ևս բացարձակապես հայաբնակ է:

2. Ախալցխայի շրջանն ունի 36 գյուղ, որոնցից հայաբնակ են 15-ը՝ գումարած նախկինում հունաբնակ, այժմ արդեն հայաբնակ դարձած Միքելծմինդա և Ջրյոխ (Օրիոխի) գյուղերը: Այսպիսով, Ախալցխայի հայկական գյուղերի թիվը հասնում է 17-ի:

3. Նինոծմինդայի շրջանն ունի 31 գյուղ, որոնցից 8-ը ժամանակին բնակեցվել էր դուխորուրներով: Նրանց մեծ մասն այժմ լքել է իր բնակավայրը: Նինոծմինդան գրեթե ամբողջությամբ հայաբնակ շրջան է:

4. Ասպինձայում հայաբնակ է միայն Դամալա գյուղը, և մոտ 20 հայ ընտանիք կա քաղաք Ասպինձայում:

5. Ադիգենի շրջանում հայաբնակ է միայն Աբասթուման գյուղը, փոքրաթիվ հայեր էլ կան Աբասթուման ավանում:

6. Բորժումի շրջանում կա 3 հայկական գյուղ, որոնք անհիմն անջատվել են Ախալքալաքի շրջանից և միացվել Բորժումին: Բորժումի շրջանի հայ բնակչության ընդհանուր թիվը 3 124 մարդ է²⁶:

Ինչ վերաբերում է Քվեմո Քարթլի նահանգի մեջ մտնող Օսլյայի շրջանին, սպա այստեղ հայ բնակչությունը ընդհանուր բնակչության 55 %-ն է: Այս շրջանն աչքի է ընկնում իր առավել բազմազգությամբ: Բնակվում են հայեր, հույներ, վրացիներ, ադրբեջանցիներ, ռուսներ, օսեր, արխազներ, ուկրաինացիներ, եզդիներ և այլն²⁷: Ժողովրդագրական կազմի փոփոխությունը 1979-2006 թթ. հետևյալ պատկերն ունի²⁸.

Աղյուսակ 7

Օսլյայի շրջանի էթնիկ կազմի փոփոխությունները 1979-2006 թթ.

Ազգեր	1979 թ.	2002 թ.	2006 թ.
Վրացիներ	1.710	2.510	8.000
Հայեր	13.996	11.484	11.000
Հույներ	30.811	4.589	1.500
Ադրբեջանցիներ	2.231	1.992	1.800
Այլ	592	313	300
Ընդամենը	49.340	20.888	22.600

²⁶ Նույն տեղում, էջ 290-291, 311:

²⁷ Սարգսյան Վ., Սամցխե-Ջավախք-Թոեղքը հայ-վրացական հարաբերությունների հղովնություն, էջ 27:

²⁸ Джонатан Уитли. Пути к разрядке напряженности в Цалкинском районе Грузии: роль международного сообщества и государства, Рабочий доклад ЕСМИ, N 36, декабрь, 2006, с. 8.

Մտահոգիչն այն է, որ Սամցխե-Ջավախքի հայ բնակչությունը աստիճանաբար նվազում է, և աննախադեպ չափերի են հասնում արտագաղթի ծավալները: Վրաստանը հայաբնակ բոլոր շրջաններում էլ փորձում է փոխել ժողովրդագրական կազմը: Նինոծմինդայում հիմնական թիրախ էին դարձել դուխոբորների լքած տները, որոնցում փորձ արվեց բնակեցնել վրացի փախստականներին, Շալկայում՝ սվանների ու աջարների: Նինոծմինդայի այդ ծրագիրը կարելի է համարել ձախողված, քանի որ այն հանդիպեց տեղի հայ բնակչության ուժեղ հակազդեցությանը: Բշխանությունների ծրագրերին հակառակ՝ ազատ մնացած տներում բնակվեցին հարևան հայկական գյուղերի երիտասարդ հայ ընտանիքները: Շալկայում սվանների ու աջարների վերաբնակեցումը հանգեցրեց ընդհարումների հայերի, հույների և վերջիններիս միջև: 2006 թ. մարտի 9-ին Շալկա քաղաքում տեղի ունեցավ աջար և սվան վերաբնակիչների 15-հոգանոց խմբի զինված հարձակում մի քանի հայազգի երիտասարդների վրա: Մի հոգի սպանվեց, 2-ը ծանր վերքերով տեղափոխվեցին հիվանդանոց: Մարտի 10-ին ոստիկանության շենքի առաջ տեղի ունեցավ հայերի 300-հոգանոց բողոքի ցույց, որը պահանջում էր պատժել մեղավորներին: Հատուկ ջոկատայինները ցույցը ցրեցին. ըստ Շալկայի շրջանից պատգամավոր Հայկ Մելտոնյանի՝ տուժեց մոտ 100 մարդ:

Ընդհարումները մի կողմից հայերի և հույների, մյուս կողմից վրացիների միջև կրում են պարբերական բնույթ: Իսկ իշխանությունները բնականաբար վարում են վրացամետ ներքին քաղաքականություն՝ միջերեսիկական հարցերը բնութագրելով որպես կենցաղային:

Փոքրամասնությունների գործերով Եվրոպական կենտրոնի N 36 աշխատանքային զեկույցում հեղինակը Շալկայի շրջանում գոյություն ունեցող կոնֆլիկտը ներկայացնում է ոչ այնքան ազգամիջյան հակամարտություն, որքան պայքար սահմանափակ ռեսուրսների համար²⁹: Ընդհարումների հիմնական չորս պատճառներն են համարվում.

1. ԽՍՀՄ-ի անկումից հետո առաջացած տնտեսական ճգնաժամը, ենթակառուցվածքների անմխիթար վիճակը կամ բացակայությունը, հետևաբար սահմանափակ ռեսուրսների համար մղվող պայքարի սրումը: Դրան ավելացրած՝ հույն բնակչության (այն ընդհանուր բնակչության 60 տոկոսն էր) զանգվածային արտագաղթը Հունաստան՝ մշտական բնակչության համար, որն առաջացնում է ժողովրդագրական անկայունություն և կարող է հանգեցնել կոնֆլիկտի:

2. 90-ական թթ. և 2000-ական թթ. առաջին կեսին պետության դիսֆունկցիոնալ բնույթը: Դրա հետ մեկտեղ այդ ընթացքում տրնտեսական և էկոլոգիական միգրանտների անկանոն հոսքը: Ստեղծվել էր իրավիճակ, երբ պետությունը չէր կարողանում ապահովել իր քաղաքացիների անվտանգությունը:

²⁹ Նույն տեղում, էջ 4:

3. Ապակայունացնող երրորդ հանգամանքը Բաբու-Թրիլիսի-Չեյհան նավթամուղի կառուցումն էր և դրա հետ կապված՝ նոր միգրացիոն հոսքերը տարածաշրջան: Ըստ որում պարզվեց, որ ծրագրում ներգրավված են ավելի շատ վրացիներ, քան այլ ազգություններ, ինչը ազգային փոքրամասնությունների շրջանում հանգեցրեց ազգային խտրականության մտայնության:

4. Հաջորդ հանգամանքը միմյանց հետ շփվելու անկարողությունն էր, որը հանգեցրեց համայնքային մեկուսացման: Մկսեցին չգործել միջհամայնքային կոնֆլիկտների հարթման ներքին մեխանիզմները, և նույնիսկ ձևավորվեցին «մենք» և «նրանք» հոգեկերտվածքային տարրերը տեղացիների և եկվորների շրջանում: Ըստ որում, այն համընկավ էթնիկ տարբերությունների հետ: Հայերը և հույները տեղացիներ էին, իսկ վրացիները՝ եկվորներ³⁰:

Վերաբնակեցումների հարցը այսպիսով չի սահմանափակվում: Հայերի համար գոյություն ունի բավական վտանգավոր մեսիսեթցի-թուրքերի «խնդիրը»: Այն կապված է Ադիգենի, Ախալցխայի և Ասպինձայի շրջանների հետ: Իսկ վտանգավոր է այնքանով, որքանով ռեալ է կամ կարող է քաղաքական շահարկումների տեղիք տալ: Այս գործընթացի իրականացման հնարավորություններն ու տարբերակները զգալիորեն տարբերվում են Սամցիե-Չավախքը վրացիներով բնակեցնելու ծրագրից: Սա խնդիր է՝ լի հակասություններով և դեռևս բավական մուր էջերով: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նրանց վերադարձը քիչ հավանական և ձգձգվող գործընթաց է: Առավել վտանգավոր են Թուրքիայի, Ռուսաստանի ու Ադրբեջանի կողմից անընդհատ տեղի ունեցող շահարկումները: Այդ խնդիրն օգտագործվում է Վրաստանի վրա ճնշում գործադրելու համար:

ИСТОРИКО-ПОЛИТИЧЕСКАЯ И ДЕМОГРАФИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В САМЦХЕ-ДЖАВАХЕТИ И ЦАЛКЕ

ПЕТРОСЯН Д. Т.

Резюме

В разные исторические периоды Джавахк входил в состав Армении или в состав соседних государств. На протяжении определенного исторического отрезка он являл собой независимую государственную единицу. В настоящее время злободневной задачей является демографическая ситуация в Джавахке.

Независимо от государственного статуса армяне издревле жили в этом регионе. Миграция западных армян в Джавахк в 1929-1930 гг. позитивно сказалась на количественном составе населения армянской общины, укрепив

³⁰ Նույն տեղում, էջ 27-28:

ее позиции. Помимо этого она оказала благотворное влияние и в плане культурных традиций общины.

**POLITICAL-HISTORICAL AND DEMOGRAPHIC
SITUATION IN SAMTSKHE-JAVAKHK AND TSALKA**

D. PETROSYAN

Abstract

In different periods of its history, Javakhk was either a part of Armenia or neighbouring states. It was also an independent state entity fro a certain period. At present, one of the most important issues of Javakhk is the demographic situation of the region.

Irrespective of the official status, Armenians have been living in this region since ancient times. From 1929 to 1930, the migration of the Western Armenians to Javakhk had a positive impact on the size of the Armenian community and strengthened its position. Besides, it also positively affected the cultural traditions of the community.